Կ Ա Ր Ծ Ի Ք
ՌՈՒԶԱՆՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ «ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԺԳ.00.01-«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանը՝ աղետների առումով, գտնվում է բարձր ռիսկային գոտում, որը լուրջ սպառնալիք է բնակչության համար: Աղետների ռիսկի նվազեցման և ուսումնական հաստատությունների արտակարգ իրավիճակներում գործելու կարողությունների զարգացումը կարևոր նախադրյալ է կրթության համակարգի, հետևաբար նաև սովորողների անվտանգ գործունեության համար: Եվ, ատենախոսը միանգամայն իրավացիորեն գտնում է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ որպես առանձնահատուկ համակարգ, աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների տեսանկյունից համարվում են բարձր ռիսկային օբյեկտներ: Դպրոցականներն առավել խոցելի են, քանի որ նրանց մոտ դեռևս ամբողջությամբ զարգացած չեն կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում արագ կողմնորոշվելու և ինքնապաշտպանվելու մեխանիզմները: Հուզական ֆոնի ազդեցության տակ նրանք կարող են խուճապի մատնվել, կատարել սեփական անձին կամ այլ անձանց վնասող գործողություններ, դրանով իսկ խոչընդոտելով ստեղծված իրավիճակում իրենց կողմնորոշվելուն և համապատասխան որոշում կայացնելուն: Հենց այդ առումով էլ դպրոցականները, անշուշտ, պետք է գաղափար ունենան առողջության պահպանման եղանակների և միջոցների մասին, տիրապետեն հրդեհային, բնապահպանական, իրավական անվտանգության կանոններին, արտակարգ իրավիճակներում վարքականոններին ու արձագանքման հմտություններին և այլն:

Դպրոցականների անվտանգության մշակույթը, որպես կյանքի որակի էական տարր, ատենախոսը դիտարկել է կրթության ընդհանուր համատեքստում: Հանրակրթության բնագավառում կրթական գործընթացում անվտանգության մշակույթի ձևավորումը փոխկապակցված է ուսումնական պարապմունքների և արտադասարանական գործունեության հետ, ընտանեկան դաստիարակության, ինչպես նաև դպրոցականների սոցիալականացման գործընթացների հետ: Անվտանգության

մշակույթի ձևավորման նպատակն է օգնել երեխային խուճապի չմատնվել տարբեր վտանգավոր իրավիճակներում: Անվտանգ կյանքի ապահովման տեսանկյունից հասարակության կարիքներին համապատասխան՝ մանկավարժական տեսության և պրակտիկայում պետք է իրականացվի անվտանգության մշակույթ ձևավորելու և այն զարգացնելու ուղիների և միջոցների որոնում: Դպրոցականի՝ որպես անվտանգության մշակույթ կրող սուբյեկտի զարգացումը պետք է ներառի շրջակա աշխարհը վերափոխելու պատրաստակամության ձևավորում, ներառյալ արտաքին վտանգավոր գործոնների վերացումը, դպրոցի, մարդկանց և հասարակության համար անվտանգ կենսապայմանների ապահովումը, անվտանգության միջոցների ստեղծումն ու օգտագործումը:

Այս առումներով էլ հենց ատենախոսության արդիականությունը հիմնավորված է, հստակ ձևակերպված են ատենախոսության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության լեզուն և ոճը համապատասխանում են գիտական հետազոտությանն առաջադրվող հիմնական պահանջներին:

Ատենախոսությունը կազմված է 176 էջից, ներգրավելով ներածություն, երեք գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ և հավելվածներ: Գրականության ցանկում նշված է 139 աղբյուր: Օգտագործած գրականության ցանկը արտացոլում է ատենախոսության պրոբլեմատիկան: Հավելվածում ներկայացված է հանրակրթական դպրոցներում անվտանգության մշակույթի դաստիարակությանն ուղղված ծրագրային և ատենախոսի կողմից ընտրված արտադասարանական պարապմունքների թեմաները, արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետությունը ստուգելու 68 հարցից կազմված հարցաթերթը:

Ատենախոսությունը տրամաբանական առումով ճիշտ է կառուցված :

Ատենախոսության առաջին՝ «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման գիտատեսական և գիտամեթոդական հիմքերը» գլխում ներկայացված է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի հասկացությունը, արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացի

նպատակը, բովանդակությունը, միջոցները և չափանիշները, արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացումը դիտարկված է որպես սոցիալ մանկավարժական գործընթաց:

Լիովին ընդունելի է ատենախոսի այն մոտեցումը, որ արդի պայմաններում, անվտանգության մշակույթը պետք է դառնա նաև դպրոցի արդյունավետության նախապայման և չափանիշներից մեկը: Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացումը կարևորագույն խնդիր է, և հանդիսանում է ազգային անվտանգության հիմնախնդիրներից մեկը: Ցանկացած արտակարգ իրավիճակ հաճախ կրում է եզակի բնույթ, որը պահանջում է ոչ թե կաղապարված գործողություններ, այլև ելնելով առկա իրավիճակից գիտելիքների, կարողությունների, հմտությունների և ունակությունների գիտակցված կիրառում: Իսկ այս մոտեցմանն ատենախոսը հանգել է մասնագիտական գրականության ուսումնասիրման և վերլուծության արդյունքում:

Ատենախոսության երկրորդ՝ «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների առանձնահատկությունները» գլխում դիտարկված է դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորվածության չափանիշները, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացման գործընթացում:

Վերոնշյալ գլխում անվտանգության մանկավարժությունը դիտարկված է որպես մանկավարժության նոր գիտական ուղղություն, սահմանված են նրա խնդիրները:

Այս գլխում մանրակրկիտ վերլուծության է ենթարկված նաև մանկավարժական տեխնոլոգիաների տեսության վերաբերյալ մասնագիտական գրականությունը՝ արդյունքում ատենախոսը հանգել է հետևյալ եզրահանգման: Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիան որևէ խնդրի լուծմանն ուղղված պլանավորված, նախօրոք մշակված, հաջորդականորեն իրականացվող գործողությունների ծրագիր է որևէ նպատակի ուղղված գործունեություն, որը բաղկացած է փոխկապակցված և տրամաբանորեն իրար հաջորդող փուլերից՝ ախտորոշում-կանխատեսում, մանկավարժական իրավիճակի հետագա, հնարավոր զարգացման հեռանկարի

կանխատեսում՝ ուսումնական աշխատանքի ճշգրիտ նախագծում և այդ նախագծի հստակ կիրառում: Ընդ որում, արդյունքում անպայմանորեն հասանելի են դառնում նախագծված արդյունքները, որոնք պետք է համապատասխանեն մեթոդաբանական հիմնական պահանջներին կամ տեխնոլոգիականության չափանիշներին՝ համակարգայնություն, կառավարելիություն, վերարտադրելիություն:

Այնուհետև ներկայացված է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթության հիմնական խնդիրները, անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայի հիմնական մոտեցումները, անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայի հայեցակարգի հիմնադրույթները, մեթոդաբանական ապահովման բաղկացուցիչները, անձնակողմնորոշիչ կրթության տեխնոլոգիայի հիմնական առանձնահատկությունները, արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում անձնակողմնորոշիչ կրթության գործառույթները, մանկավարժական տեխնոլոգիայի արդյունավետության պայմանները: Արդյունքում՝ անվտանգության մշակույթի զարգացման անձակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության ապահովման նպատակով ատենախոսն առաջարկել է մանկավարժական, հոգեբանական, հատուկ առարկայական գործողություններ:

Ատենախոսության երրորդ՝ «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը և արդյունավետության փորձարարական ստուգումը» գլխում ներկայացված է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության հետազոտությունը և մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության ստուգման արդյունքների վերլուծությունը:

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման նպատակով ատենախոսի կողմից անցկացվել է մշակված ուսուցման գործընթաց անձնակողմնորոշիչ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառությամբ և իրականացվել մշակված տեխնոլոգիայի արդյունավետության փորձարարական ստուգում

հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական ծրագրի ուսումնական խմբերում, միջնակարգ ու հիմնական դպրոցներում:

Տրամաբանական մոտեցման արդյունքում անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի նախագծման ընթացքում ձևակերպվել են անձնակողմնորոշիչ ուսուցման գործընթացի դիդակտիկական ապահովման պահանջները: Կիրառված անձնակողմնորոշիչ ուսուցման տեխնոլոգիան խթանել է դպրոցականների գործողությունները, որոնք միտված են նրանց ինքնաճանաչմանը, ինքնակատարելագործմանը և ինքնադաստիարակությանը:

Այս գլխում ներկայացված է ատենախոսի կողմից մշակված անձնակողմնորոշիչ տեխնոլոգիան աղյուսակով, որտեղ հստակ առանձնացված են ուսուցչի և դպրոցականի գործառույթները դասի ընթացքում: Ներկայացված անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի աղյուսակի նախապատրաստական փուլում մշակվել է նաև պրոբլեմային մոտեցման դրվածքը, և դպրոցականների հետ ստեղծված իրավիճակի լուծման տեխնոլոգիական քայլերը:

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիայի արդյունավետության հետազոտության անցկացման ընթացքում հաշվի է առնվել գործադրման մակարդակը, գիտելիքների յուրացման առաջատար հայեցակարգը, անվտանգության մշակույթի կրթության բովանդակության բնույթը, ուսուցման կազմակերպման ձևերը, առաջատար մեթոդները, դպրոցականների որակական հատկանիշները: Իսկ անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության հետազոտությունն իրականացվել է ընդհանուր մանկավարժական (ընդհանուր դիդակտիկական), առարկայական և մոդուլային մակարդակներում:

Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության իրականացված հետազոտությունն իր մեջ ներառել է հետևյալ ուղղությունները՝ տեսական հետազոտություն, զարգացած երկրների կրթական ծրագրերի կատարելագործման ու կրթական ծրագրերի մշակման գործընթացում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման փորձի վերլուծություն, էմպիրիկ հետազոտություն, մանկավարժական գիտափորձ, ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի,

դպրոցականների ուսումնահիմացական գործունեության և ինքնուրույն աշխատանքի վերլուծություն:

Գիտափորձը ներառել է հետևյալ փուլերը՝ նպատակադրում, գիտափորձի պլանավորում, անցկացում, ստացված փորձարարական տվյալների վերլուծություն, եզրակացությունների արձանագրում:

Գիտափորձի ընթացքում մշակված տեխնոլոգիաայի արդյունավետության գնահատման նպատակով մշակված է հարցաթերթ: Հարցաթերթերի արդյունքներն ամփոփված է աղյուսակներով, որտեղ գրանցված են սովորողների պատասխանների համամասնություններն՝ ըստ փորձարարական և ստուգողական խմբերի:

Ատենախոսությունը կազմող գլուխներում լուծված են հետազոտության խնդիրները, հիմնավորված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփված են աշխատանքի արդյունքները: Ատենախոսության եզրակացությունը հավաստում է նպատակի և դրված խնդիրների լուծված լինելը, հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է սեղմագրում:

Ատենախոսության շարադրման ոճը, լեզուն համապատասխանում են թեկնածուական գիտական հետազոտությանն առաջադրվող ակադեմիական պահանջներին:

Այսպիսով, Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները» թեմայով ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտամանկավարժական աշխատանք է: Ատենախոսությունն աչքի է ընկնում թեմայի հիմնավորվածությամբ, արդիականությամբ, հետազոտության բովանդակությամբ, դրված խնդիրների լուծման արդյունավետությամբ, նորույթը հիմնավոր է և արտացոլված է պաշտպանության ներկայացված դրույթներում:

Այդուամենայնիվ, ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից՝

1) մեր կարծիքով, հետազոտության 4-րդ և 5–րդ խնդիրները բովանդակային առումով մոտ լինելու պատճառով կարելի էր միավորել:

2) աշխատանքի ծավալը փոքրացնելու նպատակով կարելի էր առաջին գլուխը կրճատել և անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի արդյունավետության ստուգման հարցաթերթերի արդյունքների ամփոփման աղյուսակները տեղափոխել հավելված:

3) եզրակացությունները պիտի լինեն կարճ և հստակ. այդ տեսանկյունից, օրինակ երկրորդ կետը ենթակա է հստակեցման

4) տեքստում օգտագործված են ընդունակություն և ունակություն բառերը, ինչը մեր կարծիքով ընդունելի չէ:

5) առկա են շարահյուսական, ոճաբանական որոշ անհարթություններ, ինչին ևս պիտի լուրջ ուշադրություն դարձնել:

Սակայն, այդ թերություններն ու բացթողումները, չեն կարող ազդել ատենախոսության գիտական արժեքի վրա:

Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները» խորագրով ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջները, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ ՊԱՐԳԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոս Պ.Հ. Գևորգյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ.Գ.Թ. ԴՈՑԵՆՏ ՍԵԴԱ ՍԱՂԱԹԵԼԻ ԲԵԺԱՆՅԱՆ